

ԵՐՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 5 ռուբլ, կէս տարեկանը 3 ռուբլ:

Փիճիկում գրվում են խմբագրատանը և պ. Մատուրեանի խանութում:

Օտարաբարոյաբանը դիմում են ուղղակի Տիֆլիս, Բոսապա „Մուսա“:

Խմբագրատանը բաց է առաօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լի գլոյթի:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր բառից մի կոպէկ:

Մեր ստորագրողներին խնդրում ենք հասցնել մեզ „Մշակի“ տարեկան վճարը անպատճառ մինչև ՅՈՒՆԻՄԻ ամիսը:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Գանգատվում ենք, բայց չենք գործում: Ներքին տեսութիւն: Առևտրական գաղափարներ խնդրելու: Մինչդէռ կապիտալ մասին „Трѣ. Вѣстн.“ քաղաքից: Նամակ Լոս-Անջելեսից: Նամակ Ալեքսանդրապոլից: Նամակ Մադրիդից: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Քաղաքական տեսութիւն: Նամակ Փարիզից: Ռուսները: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց:

ԳԱՆԳԱՏՎՈՒՄ ԵՆԻ ԲԱՅՑ ԶԵՆԻ ԳՈՐԾՈՒՄ

Արկին լսելն են լինում գանգատներ հասցի թանգութեան մասին: Արկին պահանջում ենք բազմապիսի վարչութիւնից, որ նա հոգայ գանգատն կարգադրութիւններով այդ թանգութեանը առաջն առնելու:

Մենք յիշեցնում ենք ընթացողին անցիկ տարվայ „Մշակի“ յօդվածները (միջ. 15 և 19) որտեղ խոսելով թանգութեան պատճառների վրա, մենք մի կողմից աշխատել ենք ապացուցանել, որ քաղաքային վարչութիւնը և ոչ մի վարչութիւն կարող չէ հիմնաւոր միջոցներ գործ դնել հասցի թանգութեանը առաջն առնելու համար, իսկ միւս կողմից առաջարկել ենք հասցի և առաջին հարկաւորութեան միջոցներ արդիւնաբերողներ ընկերութեան մի նոր կազմակերպութիւն:

Ինչ ուզում է կարգադրութիւնների անէ մեր քաղաքային վարչութիւնը թանգութեան յայտարարութեան ժամանակ ինտենդանտայինց հասցի պաշար առնէ, պոլիցիական կարգաւորութիւնների անէ Թիֆլիսի հասցի վաճառանոցի վրա, աշխատէ մեր համբարների համար հասցի պաշարային պահանջներ բանտը, — այդ բոլոր միջոցները ի հարկէ քաղաքական կերպով հոգնեն, բայց այնու ամենայնու արմատական չեն կարող լինել, տեղական չեն լինի... Արանք ժամանակաւոր միջոցներ են:

Միակ միջոցը այն տեսակ ընկերացութեան իրագործելն է, ինչպէս մենք անցիկ տարվայ „Մշակի“ վերև յիշված համարներով մէջ առաջարկած ենք:

Հասցի մեզանում կը ստանայ մի կանոնաւոր բնական գին, միայն այն ժամանակ, երբ կիրաւորվի գիւղական կրէգիւղը, որի մասին մենք անդադար խօսած ենք մեր լրագրի մէջ: Միայն գիւղական կրէգիւղի օգնութեամբ կարելի կը լինի գիւղական արդիւնաբերողներին՝ գիւղացիներին և կալուածատէրերին, անմիջապէս հասցիով քաղաքը իրանց արդիւնքը հասցի և առաջին հարկաւորութեան ուրիշ արդիւնքները:

Ինչպէս որ չարչին, որ էժան գնով առնում է հասցի գիւղում և աւել թանգ է ծախում նրան քաղաքում, չէ կարող անմիջական արդիւնքներ համարվել, այլ անմիջական արդիւնքները պէտք է համարվին իրանց գիւղացիք և կալուածատէրերը, — այնպէս և քաղաքի անմիջական սպառող չէ կարող համարվել ունեւոր դասը, այլ քաղաքի միջին դասը և աշխատողները:

Թանգութեանը առաջն առնելու կարող ենք միայն այն ժամանակ, երբ կիրաւորենք մի-

նկերացութիւն գիւղի անմիջական արդիւնքները որոշելով և քաղաքի անմիջական սպառողներին մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՆԵՏՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ԽՆԴԻՐԸ

Ռուսաց Պետական Խորհրդում շուտով պէտք է ընկնի առևտրական դատարարութեան նոր կանոնադրութեան ծրագիրը, որտեղ կարգվել է մի առանձին մասնագործ սննտային Թրիբի նախագահութեամբ: Ռուս „Моск. Вѣд.“ լրագիրը հաղորդում է, թէ ծրագիրը առաջարկում է հիմնել Ս. Պետերբուրգում առևտրական բարձր ատենա, որ պիտի լինի բարձրագոյն կայսրան բոլոր առևտրական դատարանների համար, իրեն ապէլ-լիացիական դատարան:

Մի և նոյն ժամանակ առաջարկվում է վաճառականներին ապ իրաւունք խնդրել հիմնարկել իրանց քաղաքներում առանձին առևտրական դատարաններ, կամ վերջապէս խնդրել կարգվել առանձին առևտրական բաժին նահանգական դատարաններում (Օկրուժնոյ սուդ), ստորագրելով այդ բաժինը առևտրական կենտրոնական ատենան:

Վաւարական դատարաններ իրաւասութեանը կենտրոնական այն բոլոր գործերը, որք համարվում են առևտրական, այսինքն ունեն առևտրական բնութիւն, թէ և այդ գործերը վերաբերեն այնպիսի անձերին, որք իրանք վաճառականներ չեն:

Վաւարական դատարանի իրաւասութեանը դուրս մտնում են 151 ռուբլ գումարից ցած գործերը, կամ այն գործերը, որք 501 ռուբլ գումարից ցած են, կթէ բացված դատի մէջ պատասխանատուն կենում է ուրիշ տեղ, քան թէ ուր գտնվում է առևտրական դատարանը: Մուրհակներին (վերջի) վերաբերեալ գործերը, ինչ գումարի և լինեն, — պիտի ենթարկվին առևտրական դատարանների ընկերութեանը: Վաւարական դատարարութիւնը մի և նոյնը պիտի լինի, ինչպէս և այժմեան քաղաքական դատարարութիւնը, այն զանազանութեամբ միայն, որ մի քանի ձևեր աւելի պարզ և զիւրիւն կը լինեն:

Վանագլխաւոր նորաձեւութիւնը այդ դատարարութեան մէջ այն կը լինի, որ առևտրական դատարանին իրաւունք կը տրվի վճարել վնասներին վերաբերեալ գործերում՝ ազատ համոզմամբ որոշել վնասների դուրսը, առանց հարկաւորութիւն ունենալու՝ պահանջել առանձնապէս փաստեր և ապացոյցներ միայն իւրաքանչիւր կողմից համար, ինչպէս որ այժմ լինում է ընդհանուր քաղաքական դատարաններում: Ս. յդ մեծ հիշատակն է, որովհետև մինչև այժմ այդ հանգամանքը մեծամեծ նեղութիւններ պատճառ էր լինում:

Վալիցիցիա ապ կարելի է առևտրական կենտրոնական ատենանում միայն այն գործերին վերաբերութեամբ, որոնց գումարը 3000 ռուբլից բարձր է:

Մեր ընթացողներին յայտնի է, որ Փոլսի խորհրդի Պետալարութիւնը քանի մի ժամանակ առաջ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնի կարգված առևտրական դատարանի հիմնարկութեան վերաբերեալ ծրագիրը ուղարկել Ս. Պետերբուրգ, արգարութեան մի-

նկարութեանը ներկայացնելու, և նրա կարծիքը այդ մասին իմանալու համար: Ս. յդ լուրում ենք, որ կօմ Գոմ-Պալէնը պատասխանել է, թէ աւելի նպատակաւոր կը լինէր, եթէ Պլիսաւոր Առաւելարութիւնը սպասէր մինչև ընդհանուր ծրագրի հաստատվելը և ապա նորից մշակել տար իր ծրագիրը, յարմարեցնելով այդ մասնաւոր ծրագիրը ընդհանուր օրէնքի ոգուն և ուղղութեանը:

Ս. յդ լուրը ի հարկէ ուրախալի պէտք է համարվի մեր վաճառականութեան համար:

ՄԻ ՆՈՐ ԳԻՐԻՔ ԿՈՎԿԱՍԻ ՄԱՍԻՆ

Նորիւմ հրատարակեցաւ Մօսկովայում մի առևտրէն գիրք Աովկասի մասին, հիղիսականութիւն պ. Մ. Վալդիկինի (Путеводитель въ Путешествіи по Кавказу. М. Владыкина. Москва. 1874.): Սա մի ուղեցոյց է Աովկասում ճանապարհորդելու ցանկ կացողներին համար: Բայց ցաւալին այն է, որ գիրքը լի է սխալներով թէ անուններով, թէ աշխարհագրական տեղեկութիւններով, թէ ժողովրդի կեանքի նկարագրութեան կողմից: Վաւարաբար, Պատասխանի փոխանակ՝ Պայտանուր և այլն: Ուղիղ չեն թարգմանված բառերը առևտրէն լրագրով՝ վրաց Գովկաս Ամաթա կիկղցին, որ նշանակում է սուրբ երկրորդութիւն, պ. Վալդիկինը թարգմանում է՝ սուրբ Աստուածածնի կիկղցի: Պայտանուրը Երևանից դէպի հարաւն է զանվում (երես 19) որ Աշխարհի գտնվում է Երազած սարի ստորոտում (երես 331): Հեղինակը կովկասեան աղբիւրի հասարակական կեանքը նկարագրելով, հաւատացնում է որ դուրս Երբ ամենքը գիտեն կարգաւ և գրել այն ինչ այդ ազանդին իր կրօնքով արգելված է կարգաւ և գրել սովորել: Նրա կարծիքով վրացիները, իսկիները և դուրխացիները զանազան ազգութիւններ են: Վիճակաւորական տեղեկութիւններն էլ շատ հիտաբերել են Վերջովկասում հիղիսակի կարծիքով 2) միլիոն բնակիչ կայ, և Աովկասում գրիթէ նոյնքան, այն ինչ մեզ յայտնի է որ կովկասեան սարերից այս կողմը մօտ 4 միլիոն բնակիչ կայ, իսկ հիւսիսային Աովկասում միայն 1) միլիոն: Աովկասի և Վերջովկասի կառավարական բաժանման մասին մինչև անգամ ճիշդ տեղեկութիւն չունի մեր հիղիսակը՝ նա խօսում է դեռ Շամախու նահանգի մասին, այն ինչ այդ տեսակ նահանգ չը կայ, որովհետև Շամախին այժմ պատկանում է Բագրատի նահանգին: Վանագիկցիները այն է, երբ խօսելով վրացիներին (?) հասարակական պատմական կեանքի վրա պ. Վաւարիկինը ասում է վրացիներին մօտ համար 329—330): Յայտնի է որ առևտրէն ցէկն նոյն է որ մեր համար բառը...

Ս. յդ հարցնում ենք՝ ինչ օգուտ կարող են բերել այդ տեսակ գրքերը: Յանկալի չէր լինի, որ պ. հիղիսակը իր գրքի վերջը տպէր և գրքի մէջ պատահող անթիւ սխալների մանրամասն ցուցակը...

„Трѣ. Вѣстн.“ լրագրում կարգում ենք հետեւելը:

Մյս մօտ օրերումս Արևանից լուր ստացվեցաւ, որ այդտեղի պաշտօնականից միւր, մայր Գալիբ Միբրիսան և անցըր, նախկին օւկղչի նաչարիկ Նոր-Նայազըի, անձաւ պանութիւն գործից իրան վրա հրացանն արձակելով: Անձաւայանութեան օրը նա տունը տուաւ մի գործ Արևանի Օկրուժնոյ դատարանում: Գատարանը վառեց յետ պահանջը նրանից կտոյ բաժնիքի փողը (ազգով Արամարական) և մերժեց նրա խնդրը իր կերպաները կտոյց առնելու... Եւ այսին է որ հանգուցեալը շատ անգամ զօհ է եղած իր կեանքը փոսնդի մէջ զցող փորձելի, որը այնու ամենայնու աւջողված չեն կրէք: Ռուս լրագիրը յոյս է յայտնում որ գատաստանական խիստ քննութիւնը կը մեկնէ Ամիբանանցի անձաւայանութեան խիսական պատճառը...

Նոյն լրագրում կարգում ենք որ զիտաւորութիւն կայ հիմնել Թիֆլիսում կրակի դէմ Ապահովութեան ընկերութիւնը 1/2 միլիոն ռուբլ հիմնական գրամազլիով:

ՆԱՄԱԿ ԼՕՈՒՈՒՑ

Ալեքսանդրապոլի ճանապարհը, որ Նիկիթանից դէպի արևմուտք է դնում, հետևում է Ալաուաի գետակի ձորը, որ շարունակվում է մինչև Նիկիթանիս մալականների գիւղը: Ճանապարհի վատութիւնը մասամբ խանգարում է բնութիւնը ըստ արժանւոյն վայելելու, բայց երբ ես այս բոլոր տարածութիւնը (մօտ 12 վերստ) ոտով անցայ, ինձ այդ ձորը կրկնակի ուրախութիւն պատճառեց: Բարձր սարեր մեծ մասով վերջանալիս (հարազային) ծագումից, որոնց ձևերը միշտ աւելի ինքնուրոյն և յատկանիչ են, բարձր և խիտ անտառներ, որոնց մարդը շատ տեղ մինչև անգամ ձեռք չէ տուել, անթիւ աղբիւրներ, փորձիկ գետակներ, և հանրային աղբիւրներ, որոնց կրի պարունակութիւնը տեղ տեղ ծածկի է ամբողջ ժայռեր իր մրուրներով և մասամբ կարգվել են տալլախիտներ: Այսպիսի մի շրջանակի մէջ բնութիւնը ի հարկէ մի գեղեցիկ պատկեր կը ներկայացնէ: Այս տեղերումը այժմ մի գեղեցիկ շուտ է չլինում:

Ճանապարհ աղբիւրներից երկուսի վրա ինչպէս երևում է բնակիչները ուղարկութիւն են դարձրել, որովհետև երկուսի մօտ էլ չլինած են փայտեայ աւազաններ, որոնց մէջ կարելի էր լողանալ, եթէ նոքա այն անկարգ գրութեան մէջ չը լինէին, ինչպէս որ ես գտայ նոքա: Նոյնպէս մէկ զբլուխաւոր պարունակում է անխաթիւ կր, իսկ միւրը անխաթիւ երկաթ: Այս վերջիցը ըստ երկուսի բաւական շատ տակտ երկաթ է պարունակում և ջրի երակն էլ բաւական առատ է: Երկուսն էլ թթու համ ունեն և սաստիկ փրքփրում են լուծված անխաթիւ շատ մեծ քանակութիւնից:

Ալաուաի գետակի միւս (այլ) ափի վերա ես տեսայ գրանիտի ծաւառած ժայռեր (erratische Blöcke, валуны) որոնց ծագումն ինձ չը յայտնեցաւ հետազօտել, բայց գուցէ հաւանական է, որ նոքա բերվել են Փամբակի շղթայից: Այս կողմերում ինձ պատմում էին որ Ալաուաի գետակի աւազի մէջ ոսկու փոքր քանակութիւններ էին գտել և մասնաւոր մի այլ փոքր գետակում, որ ընկնում է Ալաուաի մէջ, ասում են թէ գտնվել է այդ մասալի հատեր, թէ և պատահմամբ, իսկ կանոնաւոր հետազօտութիւններ ոչլիցը դեռ արած չեն:

Նիկիթանից ճանապարհը դէպի Ղարաբիլիս հիւսիս-արևմտեան կողմն է չեղվում և Ալաուաի ձորից անցնում է դէպի Փամբակի ձորը: Այս ձորի մէջ անտառները նուազում են և նոքա տեղերում են մշակուած հողեր, որոնք ընդլայնվում են միայն փոքր անտառներով, մինչև որ ճանապարհը հասնում է Ղարաբիլիս, — մի հայրը հարուստ դեանափոր գիւղ: Այսպիսի գիւղերը հե-

ուսուցիչ քուրմուկներն չէին երևել, եթէ չը բարձրանար նոցա միջին մի եկեղեցի կամ եւրոպական ձևով կառուցած մի տուն: Պարագլխար հետուից տեսանելի է բացի այստիկի եւրոպական շինութիւններէն, որոնց թուումը բարձր լծողած և գրեթէ ակերակ դարձած մի օղի գործարան, նմանացէս իր պղինձի և բարձր շինարներին շորհով: Գէպի Ջալալ-Օղլու շարունակելով իմ ճանապարհորդութիւնը, ևս պէտք է Ալէքսանդրապոլի ճանապարհը Ալլաղու թողնելի և դէպի հիւսիս ուղիորդելի: Եւր ճանապարհը պատրաստ չը լինելով, Բէզորդալի բարձրութիւնը (Գլալ սարը) անցնելու ճանապարհորդը ստիպուած է յարմարութեան համար ձի հեծնել: Բայց և ձիու համար այդ ժայռոտ և սեղ տեղերը մի քանի զփուաբույրներն են պատճառուած, այնպէս որ ձիաւորը ստիպուած է, եթէ ուզում է խնայել իր ձիուն, քանի անգամ ինչևի ոտով գնալ:

Այս տարածութեան վերա (Ալլաղու մինչև Գարգար մոտ 20 վերսով կը լինի) ոչ մի գլուղ չը կայ, միայն Բէզորդալի ստորոտում կայ ընդ անտառի մի գլուղ, ուր կըլիման ընդհանրապէս ներուած է միայն անսանձագուծանքը պարագլու: Այս գլուղի մէջ էլ կայ մի երկաթի հանքային ջուր, որին ընդհանրապէս չըլլապտակ է մի քանիսը պատուով, ծածկել են կտուրով և դուրը կողպէտով պակած են պահուած: Այս ջուրն էլ ինչպէս և Ալլաղու ձորը շատ քան անխիտութիւն է պարունակուած և չըլլապտակայքի ընդհանրապէս կողմից իբրև բժշկող ջուր է դործածուելու: Ալլաղու շինած է նմանապէս մի քանիսը աւազան, որի մէջ հիւանդները լողանալ կարող են:

Բէզորդալի շրջան (9184 ոտնաչափ) արևմտա-արևմտեան միանում է Ալլաղու Գաղի (կայող սար) հետ, այսպէս անվանած անդադար անձրևների պատճառով, որ այնտեղ շատ զեռակներով սկիզբն են տալիս: Ալլաղու և Բէզորդալի տակնը բարձր տեղերում ձիւնը երկար ժամանակ մնում է և հայրուծ է միայն ամառային ամիսսաք առնաններին: Ջալալ-Օղլուց մի քանի վերստ հեռավորութեամբ այժմ շարժվել մի քանի անգամ ձիւն է գալիս, որ ի հարկէ այդ տեղերի օդի հովութեան պատճառ է: Բէզորդալի արևմտեան մասումը և Ալլաղու մէջ գտնուած է շատ զեռեղիկ կղզի, որ բովաբործուած են և դործ են սփռուած Ալլաղու պղնձանիւնը: Բայց ստանկը Ալլաղու շինած մէջ կայ մի ստիպուած մարմարիտի, որի արժանապարհները գրեթէ հաւասար է երևելի կարբարի մարմարիտի: Ինձ չը յայտնեցաւ իսկ այդ տեղը հասնելու և այդ պատճառով չեմ կարող անել օրջան մեծ է դրա պահեստը:

Մայիսի 15 Ա. Արժունի

զը զըլաբաց և աղօթելով սուրբ ջուրը եկեղեցի տարան: Միւս օրը մատաղ արեցին եկեղեցու բարձում և սուրբ պատարագից յետոյ սրբոյն Թակովայ ջուրն արձաթեալ անօթի մէջ լցրած, բարձակել վերա դրած և սկսող քողով ծածկած, դարձեալ խաչով և խաչվառով և երկարութեամբ հանդը տարան մեր բարեպաշտ քահանայը, որոնց ուղևորուած էր մեծ բազմութիւն: Այնտեղ նորին սրբազնութիւնը, Վերտիչ եպիսկոպոսը (թեմակալ է Երևանու նահանգի) աղօթելուց յետոյ գարնան ծաղիկ մտնելով սրակից դաչախի և Բողոմբի վերասուրբ ջրի կաթիլներն. . . Այս ամբոխի, որոնցից շատը ստորաբրիկ ճանապարհորդութիւն էր անում սուրբ Թակովայ ջրի հետ, աղօթքը լսել երկինքը. . . Կետից յետոյ արեւելեան կողմում ամպի Բողոմբից, Արարատի դաղթի ծածկուած և երկուշաբթի մի քանի կաթիլ անձրև եկաւ, իսկ երեքշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ ոչ թէ միայն անձրևը հեղեղանման ուռիցք փչելով ծածկած երևանը, այլ և կարկուտը քիչ մնաց խաղողի դաւար ողկույններ ջարդէր: Եւ մինին խորհող սուկեցի սուրբ Թակովայ ջուրը բերել յուր և օգտաստ ամիսներում, երբ երևանայ արեգակի ճառագայթները մարդոց շունչ են կարում, նա ինձ պատասխանեց, ասին ժամանակ ցորեն ձուռններին անձրևը միայն կուայ: Այս չորս ամբոխ սուրբ Թակովայ ջրի գործութեանը եկած անձրևը տեւեց 4 ժամ 41 րոպէ և անձրևաչափում բարձրացաւ ջուրը 197 միլլ: Եւ կարծեմ ներքի կլինի այս տեղ բերում իմ նկատողութիւնը անձրևի համար: Ապրիլի 1-ին 1873 թ. մինչև ապրիլի 1-ն 1874 թ. այսինքն մի ամբողջ տարի Երևան քաղաքը տեսել է 99 անձրևային օր \* (եթէ երևանցիք մի քանի անգամ Արարատեան ջուրը բերած լինէին, ջուր կարթի է այս թիւը կրկնապատկուէր): Անձրև և ձիւն եկելն 354 ժամ և 31 րոպէ և անձրևաչափում ջուրը բարձրացել է 2180 1/2 միլլիմետր:

Այս թւերից երևում է, որ համարեա խորքանչիր օրուայ մի ժամ անձրևային է եղել: Պէտք է ասել, որ այս տեղի անձրևները շատ թույլ են լինում, բայց գարնան անձրևներից, որոնք երբեմն, թէ և շատ քիչ, գալիս են հեղեղ նման:

Գարնան չորութիւնը եղաւ պատճառ ցորենի թանգութեամբ, առաջ ծախվում էր տեղական խաղվարը (30 փ.) 10—12 րուբլի, իսկ այժմ բարձրացել է մինչև 18—20 ր. Գործուողիցը շատ բաւական են դրանով: Այնցալ օրերում այստեղի հայրութիւնը ամեն տեսակ միջոցներով աշխատում էին աւելի բարձրացնել ցորենի զինը. նորա իւրեանց ցորենը յանձնում էին ծանօթ մարդոց անելի թանգ գնով գնելու, այնպէս որ մի հայրութիւն այդպէս անելով ցորենի զինը բարձրացրեց մինչև 25 ր. խաղվարը: Հայրի ֆունթը անցեալ ամսին ծախվում էր 1 1/4 Կ. իսկ այժմ ծախվում է 1 5/8 Կ. առճաստարակ բոլոր ուսեղիքները այս տարի թանգ է. իւրի ֆունթը ծախվում է 30 Կ., քրտի պանրի լիւրայ (12 Ֆ.)—85 Կ., տաւարի մսի ֆունթը 6 Կ., իսկ ոչխարինը 7—10 Կ., անհալ դմակի ֆունթը ծախվում է 14 Կ., ձուի հարկը—1 ր., ձուղի ֆունթը—մի րուբլ: Միւս աւարկաները ունին այս գները. ուր շաքարի ֆունթը ծախվում է 8 ր., 80 Կ. գարնի զենում են 12 րուբլով խաղվարը: Ամբիկայի բամբակի լիւրայ ծախվում է 1 ր. 80 Կ., իսկ կրեանու 1 ր. 10 Կ., բրնձի խաղվարը գնում են 46—55 րուբլով: Երևանայ վաճառանոցում կրեում է այժմ բեռներով չափել: խաղվարը ծախվում է 55 ր. իսկ օղիի չափելի խաղվարը 45 րուբլ:

19 մայիսի. Ա. Ջելինսկի

համար մի գարդը միայն կայ, ուր 60 աղջիկ են սովորում\* այնպէս արական սեռից տասն և երեք անձից մէկն է ուսանում միջնագի իրականացման համար կրթութիւն ստացող օրիորդաց թիւը 60 չէ, այլ մոտ 200 է. երկրորդ էթէ մասնաւոր տեղերում հասարակ ընթերցանութիւն սովորող աղջիկանց էլ նմանապէս լինենք, մասնաւոր կըրթութեանը ուսմանը տղաներից սակաւ չին լինի, կամ գոնէ զանազանութիւնը խիտ փոքր կը լինի: Երբային ատու է, որ 12 քաղաքացի հագարածու կըրթուեն, որոնք պէտք է հսկեն այս ուսումնարանի մասին: Հայոց կրօնի ուսուցչին տարեկան 150 մանէթ է նշանակուած: Պրոֆէսորները քաղաքի բոլոր աշակերտներին երթնելով պիտի լինին: Վկայականով աւարտողները իրաւունք կունենան մասնաւոր և արքունի ստորին դպրոցներում ուսուցչուհիութեան պաշտօն վարելու:

Ժողովուրդը նորհակալութիւն յայտնեց նորին գերագանցութեան, այս օրոքեց պ. գաւառագետի միջնորդութեամբ խնդրել նահանգապետին, որ բարեհաճի թողնել առ այժմ օրիորդական պրոֆէսորական և իւր ուչարութիւնը դարձնէ տղայց պրոֆէսորական վերա, որի մասին արդէն 3 տարի է խնդրել և տուել հասարակութիւնը և տակալին պատասխան չէ ստացել, կամ եթէ տղայց պրոֆէսորական չէ տալիս, իրաւունք տայ արհեստական ուսուցչուհի արհեստը: Նորա պատասխանը նախադաս չէ ստացել, որ պատահող հանցանքներին մեծ մասը կատարվում են արական սեռի անհասներով և ուրեմն դրոյս կրթութեան աստիճանը պէտք է աշխատել բարձրացնել:

Հասարակութիւնը լաւ դիտէ, որ իւր անդամներ իրական սեռը շատ աւելի բարեբաւ, պարկեշտ և աշխատասեր է, քան թէ այն թիւրուս կրտստարները, որք ուսել են մասնաւոր խաղվարի մաս: Հասարակութիւնը լաւ ճանաչելով իւր տեղային հանգամանքները դիտէ, որ տակալին պատասխանատու\* թէ պետական օրինաց առջև և թէ ընտանեկան պահանջմանց հանդէպ՝ էապէս արական սեռն է և ոչ իրականը:

Ապրիլ. 1874.

պաշտութեանը, մի անաղին հարստութիւն է դիտում աւետարանի անուանով:

Մի ուրիշը ուխտել է իւր տան մէջ ոչ նախաճաշել, ոչ ճաշել և ոչ ընթերլ. Ժողովուրդը խնայեց:

Մի երրորդը հարստացել է, իւր սրբազան պաշտօնի տակ ամենայն հարստահարութիւն սուրբ և նուիրական համարելով: Այդ երկուքների հետ զուգընթաց տեսնում ենք խեղճ, հարստահարված քահանայութիւնը, որ եթէ չէ ուզում հացի խնդրել պատճառով պարագլու ամենաստոր մարագլանութեամբ, ստիպված է պարագլու աշխարհական գործերով:

Ճանաչում ենք քահանայ, որ այսօր կոմիտիներ է մի հաց աւետող վաճառականի: Ճանաչում ենք քահանայ, որ սպասաւոր է մի կապալաուրի մօտ: Ճանաչում ենք քահանայ, որ մի այլազգի մօտ, վերջին աղքատութեան պատճառաւ, ջրաղացպան է: Գլխունք մի քահանայ, որ սուրհանդակի պաշտօն է կատարում: Ճանաչում ենք մի քահանայ, որ մի հարուստ քահանայի մօտ լրեսուրի պաշտօն է կատարում ընտանեկը պարենը հայթայթելու համար: Ճանաչում ենք քահանայ, որ հայերի մէջ հայ էր, կաթօլիկները մէջ վերապատուելի, թուրքերի մէջ սօլալայ: Պատճառաւ պատճառ պէտք է հարցնել արձաթիս: Աճեմք աւելի: ճանաչում ենք քահանայ, որ աւագակութեան մէջ բռնուկով, հազիր պատուեցաւ նորհիւ: Այնչաչարութեան և նորոգամտութեան ժողովրդի:

Եթէ այս այսպէս չէր, ասացէք ինձ, աղաչեմ, ինչ պատճառաւ այդ եկեղեցական իշխանութեան ամենայն հրամաններ, իբրև անպիտաններ, մոռեալ տաւեր զիջվում էին միմեանց վերա: Ինչ կարող էր անել իշխանութիւնը այնտեղ, ուր տեսնում էր օրինապահութեան ամեն արտաքին ձեւեր, տեսնում էր ամեն հրամանների վերագլույններ, իսկ իրագործութեան մասին նա հարկաւ լինելու էր անտեղիակ, մինչդեռ ոչինչ ձայն և բողբ չէր բարձրացած:

Շատ սրտեր ցաւում են և վրդովում են, երբ հաւատոյ գործողութիւնը գտնուում են տգէտ և կեղեցականների ձեռքում, ցաւում են որ նոցա ազգութեամբ և արձաթարութեամբ տակաւ ստակաւ կրթուանում է նրանց պաշտօնը: Իւր ազնիւ և վեռն գաղափարը, այն պատճառը, որ Վարդապետի գերագոյն օրէնքը, նշանաբանը՝ սէրն էր:

Մենք մի բան կարծում ենք:

Կարծում ենք, թէ մեր եկեղեցականաց այդ ընթացիկ և վարուց դէմ բողբելով պէտք է յարգանքները մեր անձին զէմ մի կողմ խառնվածազանձ բազմութիւն քահանայները, որ պատրաստ էր ճշգրիտոր անելու այն:

Սակայն եթէ այս մեր կարծիքը չիրագործուցաւ, այսինքն եթէ վրէժնորութեան դառն բաժակը մինչև վերջին կաթիլը քամելու պատիւը չունեցանք, խօստանում ենք բարձրացնել մի այսպիսի կարեւոր հարց,—ինչպէս պէտք է վերականգնեցնել եկեղեցականաց գրութիւնը և նրանց վարկը ժողովրդան մէջ: Թող իւրաքանչիւր նախադաս յանձն առնէ այդ պաշտօնը իւր շրջանին վերաբերեալ, իսկ օրարութեան գործը թող լինի դատաւորելով հաւասար իրողութիւնները, հարցը ընդհանուր և:

Ապրիլ. 74. Եկեղեցական օմն

Ներքին 1,010ԲԲ

Մեզ գրում են Սերահանից՝ «Մշակ» լրագրից, թէ և Մեղու Հայաստանի լրագրից շատ աւելի նշանակութիւն է ստացել այստեղի երկտարագրների մէջ, բայց դարձեալ ճշմարիտ կարագործները շատ չեն: Մինչև անգամ կան 4, 5 հոգի ստացողները, որոնք փոստից չեն վեր առնում իրանց համարները: Ի հարկէ այդ նրանցից է, որ նորա սովոր են ան վրդով: խաղաղ կեանքը, օրինակ թղթախաղի և ուրիշ սրանց նման անմոռ խաղերի. . . Այսպէս չէին կարող լինել այս տեսակ տեղական հասարակական կեանքի ներկայացուցիչները. . .

\* \* \*

Վրաց «Բոբէթ» լրագրին գրում են, որ կատարելով բոլոր հաջող արտերը չլրացել են, և ոչնչացած հաջող տեղը նորից ցանկ են սկսելու և կորեակ:

\* \* \*

Մայիսի 3-ին առաւօտեան, կալանաւորվածները (արէստանները) մինը, որոնց տանում էին ղրոտերականները Օղրոտեայ դատարանը՝ հաս-

**ՆԱՄԱԿ ԱՆՍԱՆԿԱՆՍՏՆՈՒԹՅՈՒՆ**

Մի մարդ, որ զննել էր Ախալքալաքի և նորա շրջակայքի եկեղեցականքը, որ խորամուկ էր եղած նոցա մեծ մասի բարոյական և մտաւոր դարագայման աստիճանին, որ տեսել էր նոցա հասարակութեան կենսակցութիւնը Ժողովրդի հետ, այնուհետեւ պէտք է նա կարած ստով իւր ոտքի փոչին թօթափէր և հեռանար:

Եւ արդարև ով կարող էր սառնութեամբ նայել մեր եկեղեցականների վարքի վերա, ուցա մեծ մասի ազան բնավորութեան վերա, որ խառնվելով ամբարտաւանութեան և տգիտութեան հետ, նուազացրել են ժողովրդի սրբի և մէջ յարգանքը ղէպի իրանց անձն:

Եւ այս չէր կարող այլապէս լինել, երբ մի ժողովուրդ գեռ չցրել իսկի զննել եկեղեցականաց և եկեղեցոյ, քահանայի և քահանայութեան մէջ:

Եւ միթէ միայն Ախալքալաքի շրջի կողմ. . . Սակայն մեր եկեղեցականների տգէտ մասը առ ոչինչ գրելով պզդ անհամարութիւնը, որ ընդունել էին իւրեանց վերա, ջանադիր էին միայն այն բանի մասին, թէ ինչ հնարքով կարող էին նորա արձաթ դուրս քարչել ժողովրդից, ինչ միջոցներով հնար էր բռնանալ նոցա կրօնասէր սրտերը վերա. . .

Եկեղեցականներից տգէտների ձեռքում եկեղեցական կարգիւր և ծխակաւատութիւնքը չէին այլ ինչ, քան եթէ առատ եկամտաւոր աղերբը: Եւ ինչպէս կարող էր ժողովուրդը չը տեսնել քահանայների հանապարօրայ վեճը և կռիւ եկեղեցական այս և այն հասցիով վերա, որ ջերմաւանդութեամբ նուիրել էր ինքը ժողովուրդը. . .

Եթէ մի կողմից քահանայքը աշխատում էին որոնել եկամտաւոր և արգելաքի ճանապարհներ, միւս կողմից ժողովուրդը գտաւ մի զօրաւոր հնար աղատվելու նոցա անյազ ընչաքաղցրութիւնը. անտարբերութեամբ կարճեց իւր նուիրատուութիւնը մինչև մի ամենաջնչին քահանայութիւն արձաթի: Զնայելով այս զգալի փոփոխութեան, քահանայների թիւը դարձեալ բազմացաւ:

Այս, մեք այսօր մեր չլրբել տեսնում ենք մի կլայտ տգէտ, արձաթաւոր, բազմութիւն քահանայներ, որ ամենայն միջոցներով աշխատում են շորհավաճաւորութեամբ հայթայթել իւրեանց աղքատիկ վրեալ ընտանիքի օրական պարէնը:

—Իսկ հարուստ քահանայքը:

—Եւ հարուստ քահանայից շատերը աղաւ և չէին ազանութեան և արձաթարութեան ակտիւ:

Մի քահանայ, օգուտ քաղելով ժողովրդի սնա-

\*) Նրանցից 21 օր ձիւն է եկել:

հետո փոստի փոխարեն յանկարծ վեր է գցում իր հարուստը և փախում է։ Չհնուտակաւորները բռնաբար ջանքեր ի դուր էր։ Յանցաւորը փախելով մըտաւ շրջակայ տներէն մինի դաւերը մէջ և անհետացաւ։

\* \*

Մեզ գրում են Երևանէն, որ այնտեղի վարժապետները դրուած են յանախառնակի է։ Ծնողները դիմում են նրանց զանազան անտեղի պահանջներով, մի և նոյն ժամանակ իրանց երեխաներին երկար չեն թողնում ուսումնարանում, և հէնց որ փոքր ի շատէ խոնարհել սովորեցան (նամակազիրը չէ ասում թէ ինչ խոնարհել են սովորում) բայ կրբ (թէ գրուելը), իսկոյն յետ են առնում նրանց ու տալիս են վաճառականներին խանութները։ Նամակազիրը կարծում է, որ այդ է վաճառականներին հաշիւները վառ դրուած հաստատուած։

\* \*

Յիշեցնում ենք թի ֆիլիսի հասարակութեանը, որ այսօր հինգշաբթի օրը, ամառային թատրոնում յօգուտ տրիկին Սաթրինի կը լինի հայ ներկայացուցիչներ խաղալու են պ. Սուրբուհիանցի «Պէպո» և առաջին անգամ «Պառաւր ճանաք է անում» վաղը լինելու հեղինակութիւն Ա. Ք.—Մեք հաւատացած ենք, որ «Պէպո» պէտէսան տալով (վաղը լինի մասին դեռ ևս իրաւունք չունենք մեր կարծիքը տալու) տիկին Սաթրինի, որին սիրում է մեր հասարակութիւնը, և որ քանի որ մի անգամ (ինչպէս «Պէպո», «Փառքի խաղաղոցի կեանք», «Իսթաբուլ» պիէսներում) խոր ասպարուծիւն է գործել հանդիսականներին վրայ, կարող էր յուսաւ որ հասարակութիւնը միշտ կը գայ, առանց էլ երկնցողութեան անարակներին մէջ։

\* \*

«Кавказ» լրագիրը հաղորդում է, որ մայիսի 26-ին Սուխուի մէջ վարձանակի բարակացաւոր զբաղ Վոստոխ Վեդա զինվորատեսական լրագիր խմբագիր պ. Ա. Պ. Վարդանուցի։

\* \*

Շաւոնի լրագիրը գրում են մեզ հայոց կեանքին, չը նայելով ժողովրդի բազմութեան, չունեն մի քանի կողմեր որ լրացնեն պակասութիւնները չինութիւնը աւելումով, քահանայական նոր զգեստ չը կայ, կեանքիցան դարձ չը կայ և այլն... մնացել են չորս պատերը։ Հանգուցեալ Պետրոս քահանայի ժամանակից մնացած գոտարը ձմեռը անուանում է, ոչ ոք չը գիտէ և ոչ ոք հաշիւ չէ պահանջում։

\* \*

Պ. Բաքիի «Փոնտի» երկրորդ հատորը հրատարակուցաւ։ Հատորը պարունակում է իր մէջ վիպասանութիւններ։ Մենք դեռ ևս կարգացած չենք այդ հատորը, միայն կարողացանք թերթի նրան։ Մեր աչքին ընկաւ նախ և առաջ դիւր առաջարկը։ Պ. Բաքիին մեզ անուանում է կրիտիկային անսովոր մարդիկ, մեր խօսքերը վայրախառնութիւն և այլն... Մենք յիշեցնում ենք ընթացողին «Մշակ» 9-րդ համարի ֆետիւստները, որտեղ մենք թէ կապակասութիւնները ցոյց տուցիր (մի թէ չը պէտք է ցոյց տայինք), բայց և մեծ համակրութեամբ ընդունեցինք «Փոնտի» առաջին հատորը։ Մենք չէինք սպասում այդ տեսակ վիրուտական և կողմնապահ խօսքերը մեր բարեկամից, այն մարդուց, որ այդքան տարի հաւատարիմ է եղել մեր գործունէութեանը, սրտով նուիրված աշխատակից է եղել «Մշակին»։

\* \*

Մի մասնաւոր հեռագրից տեղեկանում ենք, որ Պետական խորհուրդը արդէն հաստատել է թի ֆիլիսի ազնուականների կառուածական բանկը։

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

**ԳԱՂԱՔԱՎԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

Գերմանական կողմից կուսակցութեան զինաւորները մէլը, պ. Հերման ֆոն Մալինկոստ, մայիսի 27-ին մեռաւ Իւերլինում թերթի բարբոսման պատճառով։ Նորա յուզարկեալութեան մասնակից էին ոչ միայն կենդանի ներկայացուցիչներ, այլ և ազատութեան կուսակցութիւնների անդամներ, ինչպէս Նալկեր, Գունկեր և այլն։ Սրանք մի պատ...

գամառ սօցիալիստականներին ենթարկելու շաւ կառավարութեան դատաստաններին—պ. Մասը, որ Բայխասագի այս սեպտեմբեր միայն ընտրուցաւ պատգամաւոր։ Նա մշակների մի ժողովի առաջ մի ճառ կարդաց, որի մէջ նա պաշտպանում և փառաբանում էր Փարիզի կոմունայի գործընդհանուր օտարաստանը նորան դատապարտեց երկու տարվայ և վեց ամսկայ բանտարկութեան, որ, չը նայելով պ. Մասից ներկայացրած բողոքին, և գորա ընկուծեան ժամանակ նորա պաշտպանական ճառին, կրկին հաստատուցաւ։

ՏԱՃՎԱՍՏԱՆԻՑ լուրեր են հասնում, որ Ա. Պոլսի Վալարթա հրէաների թաղումը մի մեծ հրէհ պատահից մայիսի 21-ին որի պատճառով 143 ընտանիք (680 անձինք) իրանց անկրկն զբկիցանու «Allg. Zeitung»-ի նամակագիրը հաղորդում է որ փոքր Վարդաւր ասեղի և ասեղի նկատում են սովի նշոյնները։ Բայց ստրակց ժողովուրդը ենթարկում է և ուրիշ դժբարիքութիւններին։ Բարդապ բողոքը մի հեղինակ պատգամով բողոքովին ջրի տակ է, իսկ Գլիլի շրջակայքում ժաման է ծագել։ Եւզուրայից գրում են որ 500,000 անգորայի սլածիր սովից և հիւսնաւթիւնները ստակցան, ուրիշն գրիթ է բողոք գաւառի մէջ կըսած այժմերի կէտը, և փոխանակ 137,000 լիւրայից որ այդ անասունների բուրդից ստացվեցաւ անցած տարի, այս տարի նկատուած եղաւ միայն 50,000 լիւր։ Չմիւլիսից հասնող լուրերը ընդհակառակ տեղեկանում են որ հունքը յաջող կը լինի։— «Allgem. Zeitung» լրագիր մի հեռագիր հաղորդում է Ա. Պոլսից որ կառավարութիւնը քանի մի թուրքացի քաղաքներում, որ հասունեաները բազմութիւն են կազմում հակահասունեաներին համեմատ, հրամայել է իրից հասունեաներից կեղծեցական, ուսումնարանական և հասցիքի մատանները և յանձնել նրանց հակահասունեաներին Նաղարդութիւնը պահպանելու նպատակով քանի մի նշանաւոր հասունեաներին աւելութիւնը գրաւ է վերցրել։— Նոյն լրագիրը հաղորդում է որ նախկին մեծ-վիզիր Մեհմեդ Առուչի փաշան նշանակված է Մէլայի ինձնազարգիւծ և պէտք է իսկոյն իր նոր պաշտօնը ընդունի։

Բճոնապարտեան կուսակցութիւնը փոքր ասեղի կրկին ոյժ է նշանակութիւն սկսում է ստանալ Ֆրանսիայի մէջ։ Նոր միներտութեան անդամները մի քանիսները պարզ յայտնում են իրանց հակումներ, միւսներ, ինչպէս պ. դը Ֆուրտե, իրանց գրութիւնով պարտական են կրկին այդ կուսակցութեան մտքորկներին։ Բճոնապարտեան ոյժ տալուն նը պատասխու է շատ և նոր ընտրողական օրէնքը, որի զօրութեամբ, բոլոր հարկ չը վճարող բողոքի մշակները պէտք է զբկվեն ընտրողներ լինելու իրաւունքից։ Իսկ զօրանով ասեղի նշանակութիւն կը ստանային զինական ազգաբնակչութեան բուքները, որոնք մեծ մասով յօգուտ բճոնապարտեանների միջոց էին և կր ինկնու Նյու կուսակցութեան պակասող պատգամաւորները այնու ամենայնիւ նոր ընտրողական օրէնքի բուքարկութեան ժամանակ յիտաւորութիւն ունեն նորա դէմ բուքարկութիւն, որ այս միջոցով բողոքների ազգաբնակչութիւնն էլ զեպի իրանց կողմը գրաւում։

Մի հեռագիր հաղորդում է ԱնԳլիւՍԻՑ, որ Նորին Մեծութիւն Ռուսաց Ասյուր ասեղիութիւն ունեցաւ համաշխարհային դաշնադրութեան ընկերութեան անդակական բաժնի պատգամաւորների հետ, որը Այսուրն շնորհակալութիւն յայտնեցին իրանց յայտնած համակրութեան համար։ «Journal de S. Petersburg» լրագիրը հաղորդում է որ ուսաց տերութիւնը յանձն է առնում առաջարկել միջազգային ժողով կազմել Բրիտանիայի մէջ յուլիսի 15-ին, որտեղ պէտք է վճարվի կանոնները որոնց հետեւելու են ազգերը պատեւրազներին ժամանակ, մանաւանդ թէ ինչպէս

պէտք է վարվել պատերազմական զերիներին հետ։

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ Եւրոպացիցաւ կրկին Սուէզի ջրանցքի մասին հարցը։ Իտալիայում կազմվեցաւ մի բաժանորդական ընկերութիւն որ կամենում է դնել այդ ջրանցքը։ Տէրութիւնը զիմել է Նզրիպոսի փոխարքային այդ առաջարկութեամբ, որ պատասխանել է թէ ինքն համաձայն է, բայց պէտք է և Սուէզի համաձայնութիւնը ստանայ։ Եւստրիակոս տէրութիւնը ընդդէմ է այն բանին, որ Սուէզի ջրանցք լինի միայն իտալացիների ձեռքում և առաջարկում է կազմել մի միջազգային ընկերութիւն, որ պէտք է առնի և կառավարի Սուէզի անցքը։

**ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՑ**

18 Մայիսի, 74.

Չարմանալի բան։ Գուքը զը Բրոյը Ֆրանսիայի միներտը ընկաւ միպետականների ջնորհով Այն մարդը, որ ամբողջ իր ժամանակ, ամին իր զօրութիւն գործ էր դնում Ֆրանսիայում միպետութիւնը վերականգնեցնելու համար, որ հարար ու մէկ անհուրութիւն աւառ այս նպատակով,—այժմ ստիպում է կառավարութիւնը զըրկուել և իր տեղը թողնել ուրիշներին։ Ինչ էր պատճառը, որ նորա պէս միպետական դաղաւարների տէր մարդը չը կարողացաւ հաջողել ուրիշ միպետականների հետ։ Այս հարցին պատասխան տալու համար, թող ներուի ինձ առաջ բերել Ֆրանսիական պատմութիւնը մի քանի պատմական փաստեր։

Կար ժամանակ երբ Ֆրանսիայում երկրի կառավարութիւնը ազնուականների ձեռքումն էր։ Թագաւորից յետոյ առաջին տեղը բռնած ունէին մեծ ընտանեկները և հոգեորականները։ Սրանք էին վարում թագաւորութիւնը, սրանք էին ծառայեցնում իրանց նպատակներին մնացած ազգը։ Սարկացած ժողովուրդը աշխատում էր կառավարող, ազատ և անհոգ ազնուականութիւնը նորա աշխատանքով էր ապրում։ Ամբողջ երկրի կառավարները սրանց էին պատկանում։ Սրկերը հարկից ազատ լինելով, կառավարող ամբողջապէս մոտուտ էր իրանց գրպանը։ Ռամիները պարտական էին շարժուել մի քանի օր սրանց համար աշխատել։ Եթէ իրանք իրանց արտերը ունէին, արդիւնքից տասնորդ ստիպում էին հոգեորականներին տալ և բացի սրանից մեծ հարկ թագաւորական գանձարանին։

Բայց ժամանակը անցնում էր, դարերը շրջում էին և Ֆրանսիան փոխում էր իր դէմը։ Առեւտրական կապակցութիւնը հեռու գտնուող երկրներին հետ, արհեստների զարգացում, մեծ, ազատ քաղաքների հիմնը վիչ առ քիչ ծնեցին և կազմակերպեցին հասարակական մի նոր դաս, վաճառական արհեստաւոր դասը, որ, երկրի հետ կապուած էլ չը լինելով, ազատում էր և ազնուական ճնշողական ազդեցութիւնը։

Ազնուականները միպետական էին որովհետեւ միպետութիւնը նրանց միջոց էր տալիս հեշտ կեանք վարելու։

Վաճառական-արհեստաւորները միպետական դարձան, որովհետեւ թագաւորները, դրամազորիքի նշանակութիւնը հասկանալով, պաշտպանում էին այս դասը ազնուականներից։

Իսկ ժողովուրդը ոչ միպետական էր և ոչ ուրիշ մի բան։ Սա աշխատում էր և աշխատանքը հազի թէ բաւականացնում էր իրա կեանքը։ Ազնուական թէ վաճառական, նորա համար մի և նոյն էր՝ երկուսն էլ այս կամ այն ձևով հարստահարում էին Ազնուականը,—գայտի աշխատանքում։ Վաճառականը,—նոր ծնուող գործարաններում, առուտուրի մէջ։ Ազատուել այս երկու թշնամիները,—ան նորա նպատակը։ Միայն նա չը գիտէր թէ ինչպէս, ինչ միջոցով։

Բայց ինչ որ պակաս էր ժողովրդին, ինչ որ դա չէր հասկանում, հասկանում էին և գիտէին ազնուական և վաճառական դասերը։ Երանք հասկանում էին և այն, որ, եթէ կողողատողը մէկ է, նա ասել է շահուած, քան թէ երբ ստիպում է կողողատողը երկուսի բաժանել։ Սրանից անկրկն կուի այս երկու միպետական դասերի մէջ։ Ազնուական միպետականներին նպատակը դարձաւ ոչնչացնել վաճառական միպետականներին և փոխադարձապէս։

Վաճառականները, որ ըստ օրէ ոյժ ստանալով, վերջապէս յաղթեցին ազնուականներին և կղերը։ Այս էր Ֆրանսիայի մեծ յեղափոխութիւնը (1789), և եթէ այն ժամանակը չը հաստատուեցաւ առևա-

տրական միպետութիւնը, պատճառը ժողովուրդն էր, որ կուի մէջ խանութնով, հիմեց հանրապետութիւնը։

Հանրապետութիւնը ընկաւ և նորից սկսաւ մըրցութիւնը երկու միպետութիւնների մէջ։ Այս կուիը շարունակում է մինչև այսօր։ Ազնուականները կամենում են Ֆրանսիա իրանց ձեռքը ձգել, Բուրբոնեան ցեղը թագաւորելու կանչելով, վաճառական-դրամատէրերը իրանց կողմն են քաշում և ուզում են Օրլէաններին։

Այս երկու կուսակցութիւնն էլ շատ զօրեղ են Ազգային Ժողովում (ոչ թէ ժողովրդի մէջ) և ամին անգամ որ հարկաւոր է ազատութիւն ճնչել, մի որ և է հակաթողութիւնական կանոն անդակացնել, շըրանք երգարարաւ միանում են։ Բայց երբ նրանց մէջ կամենում է ինքն հանրապետութեան տեղը բռնել, միւսը դառնում է նորա անհաշտելի թշնամի։

Այսօր էլ, երբ գուքը զը Բրոյը կամեցաւ առաջ տանել օրէնական միպետութեան գործը, Բուրբոնեանները նորա դէմ ձայն տալով ոչնչացրին նրան և նորա միներտութիւնը։ Նա առաջարկում էր հաստատել Ազգային ժողովից դուրս մի ուրիշ ժողով Մեծ անունով (Grand Conseil) որի անդամները ոչ թէ ժողովրդից ընտրած, այլ նորա, այսինքն կառավարութեան նշանակած կը լինէին մեծ մասամբ։ Այս ժողովը ընտրում է իր նախագահին և այս նախագահը կը լինէր Օրլէան ցեղի իշխաններից մէկը, որ այսպէս դառնում էր հանրապետութեան նախապետը յետոյ առաջին անձն, և եթէ Մակ-Մաւօնը կը մեռներ, կամ կը հեռանար իր պաշտօնից,—նա էր նորա ժառանգը։ Իսկ այն ժամանակ դժուար էլ չէր լինի պատրաստել Օրլէանական միպետութեան յարուցիւնը։

Դը Բրոյը չը կարողացաւ հաննել իր առաջ զըրած նպատակին։ Նա ընկաւ։ Ով կը լինի նորա տեղը։ Նորա նման մարդիկ... և նրանք էլ մի և նոյն ձևկատագրին է սպասում։ Չը կարողանալով հաստատել որ և է միպետութիւն, նրանք չեն ուզում հանրապետութեան անունն էլ ըսել։ Ինչ անել։ Բաժանուել և թողնել որ Ֆրանսիան ուրիշ պատգամաւորներին ընտրելով, ցոյց տար ինչ է կամենում ինքն։ Բայց բաժանուել կը նշանակէ կառավարութիւնը զրկուել, իսկ իշխանութիւնը այնքան քայքայ է... և զրպանին էլ օգտուաւտ։

Պ. իզմ.

**ԻՏԱԼԻԱ ԼՈՒՐՆԵՐ**

Գերմանական Լայպցիգի ան դատարանում նորերում քննվեցաւ մի շատ հետաքրքիր գործ՝ Էլզաս-Լօթարինգիայի մի բնակիչ վիրաւորական խօսքեր էր արտասանել Պրուսիական թագաւորական ընտանիքի մի անդամի վերաբերութեամբ։ Էլզասի տեղական դատարանը նրան բանտարկութեանը դատապարտեց։ Բայց գործը անցնելով Լայպցիգի դատարանը, որ կազմում է Էլզաս-Լօթարինգիայի համար դատաստանական բարձագայն կայանին, այդ վերջինը կտորեց զատակիւրը, այն հիման վրայ, որ Վիլհելմ կայսրը թէկ թագաւոր է Էլզաս-Լօթարինգիայի, բայց որպէս Գերմանիայի կայսր, և ոչ թէ որպէս Պրուսիայի թագաւոր, ուրիշն պրուսական թագաւորական ցեղի իշխանները չեն կարող թագաւորական ցեղ համարվել Էլզաս-Լօթարինգիայի համար։

«Մասիս» լրագիրը գրում է՝ կը լսենք թէ Քաղ, ժողովը նկատողութեան ասեղի վերջապէս փառիկի Մուրատեան վարժարանի խնդիրը, և իր խընդրոց կարգն անցուցել է։ Մեզ կը թուի թէ Քաղ, ժողովը լաւ կընէ բանիւրում անձերէ խառն յանձնատեղ մը կազմել, որ այս մեծ խնդիրը հիմէնքնէ, պէտք եղած անձանց և տեղեւոց հետ բանակցի, և ազգին իրաւանց վերաբերեալ կէտերն որոշապէս ցոյց տուող տեղեկագիր մը չինելով Քաղ, ժողովը ներկայացնէ։

Փոքր Ասիայի քանի մի տեղերի մէջ, ինչպէս հաղորդում են լրագիրները, սաստիկ սով է յայտնվել։ Ս. Պոլսի հայոց լրագիրները հաղորդում են, որ այդ սովաւանջ ժողովրդների օջիւրեան համար վստօ։ Սատուլուս բէյի նախագահած յանձնատեղով ձեռքով հաւարված օջիւրեան գումարը 209,385 դուրուչի հասած է։

Մի զիւրից մեզ հաղորդում են, որ գիւղի քեօլսականից միւսը գնում է անյայտ նպատակով մի գիւղացու տուն և խօսում է վերջինի գեղեցիկ կընույ հետ։ Յանկարծ կինը աղաղակում է... Այնուսինը իսկոյն մատնում է և քեօլսային օրինաւոր կերպով ծնծելուց յետոյ, ամբողջ զիւրը նրան գոմում էլի մօտ կայած է պահում։ Ասում են որ գործը քննվում է քրէական կերպով։

Մեզ գրում են Շ... գիւղից՝ նորերում մեր քահանաների թիւը անկացաւ երկուսով։ Բոխա-

Նակ հնչելի, այժմ մենք ունենք հոփ քանանայ, Նորինայ քանանաները նոյն սիրայուններն են, որք փոխանակ գրելու ստացանք, գրել են ստացանայացանք:

Չկիրգործք քաղաքի մի ստիպելի, Մայր անունով, անցեալ տարի կարողացել է փոզով ճարել իր համար Ամերիկայի Ֆիլադելֆիա քաղաքի համալսարանից մի դիպլոմ բժշկութեան և իրաւարանութեան դոկտորի: Գերմանական կառավարութիւնը սկսեց հետևել նորան: Ֆիլադելֆիա քաղաքի գերմանական կոնսուլի հետ ունեցած գրադուրութեան յայտնվեցաւ որ Ֆիլադելֆիայի համալսարանի բժշկական բաժնիը զեռ 1872 թ. Երկու փրցրած է, որեւնի այնտեղից նա չէր կարող անցնել ստանալ իր դիպլոմը: Գերմանական Կրօզաու քաղաքի դատարանը, համոզվելով որ դիպլոմը սուտ է, (թէ և շատ ճարար կերպով չինած էր), քննութիւն սկսեց: Մայրը խոստովանեց որ իր դիպլոմը սուտ է, և մասնաւորապէս գրեւիված է մի ամերիկացուց, Կատարանը դատաւարանեց պ. Մայրին դիպլոմ գնելու և այդ սուտ դիպլոմը ունենալու համար՝ 30 թալէր տուգանքի և մի ամիս քանտարկութեան, նրանից դատարանատու առնելով, որ գործ ամէլու չէ իր դիպլոմը, եթէ ոչ երկուսովիլու է աւելի խիստ պատժին: Գերմանիայում սուտ դիպլոմ չինելը պատժուած է գրեթէ նոյն խտուրթամբ, ինչպէս և սուտ թղթագրում գործելը, այն է՝ յօդ. 360, թիւ 8 Պետ. Օրէնս, հիման վրա:

Ան մի օրինակ ինչպիսի հատուկութիւններ ունին Ֆրանսիացիք թէ աչիւրհադուրութեան, թէ

քաղաքական անցքերի մասին: Փարիզում հրատարակող և հարիւր հազար ստորագրող ունեցող Petit Journal րազրում կարողուծ ենք բառ առ բառ հետևել անձուծութիւնը: «Մեզ գրում են Վրաստանի թիֆլիս քաղաքից (Պարսկաստանի մէջ) որ այդտեղ սովորած եւ լավ փոխել է ժողովուրդը մարդկերեւոյի: Մի քանի կանայք նորերում սովածութեանց կերան փոքր երեխաներին, որ լսելով, մեծ վիզիւրը հրամայեց բանտարկել նրանց: Նրանցից երկուսը զլնատվեցան և եօթը բանտարկվեցան, և կրք մի շարքից յետոյ բանտը բաց արին, կանանցից հինգը միայն գտան նրանք կերան մնացած երկուսը: Այժմ ուսումեն այստեղ ամեն բան ձեւաներին, էջերին, չնրին և այլն և սովոր օրից օր ստատկանում է թիֆլիսում: Անհարկն է քաղաքը ուսուցիչները պաշար բերելը:—Ամօթ չէ, որ Փարիզում հրատարակող մի րազիր այդ աստիճանը ողբումը տղիտութիւն ցոյց տար:»

Կառավարութիւնը նորերում հաստատել է «կուկտեան անալիզ ընկերութեան» կանոնադրութիւնը (Уставъ Кавказск. Строительнаго Общества): Եւսումը երեկ լըս կր տեսնէ այդ կանոնադրութիւնը: Ընկերութեան հիմնադրներն են՝ գնէրալ կօմս Ն. Գրաբբէ, Միտավի վաճառական Գանդէն, ինժնէր պոլիտեխնիկ Ն. Եւրոյով, պ. Կ. Կիւնցիլիսի և Նէննինգեր: Հիմնական կապիտալ 1 1/2 միլիոն ռուբլ է, բաժանված 7500 բաժնի, իւրաքանչիւր 200 ռուբլ արժողութեամբ: Թէ բաժնիներ և թէ օբլիգացիաների, մտայլական արժողութեամբ, իւրաքանչիւր հարիւր ռուբլ կարծենայ 108 1/2 թալէր, կամ 400 ֆրանկ, կամ 16 ֆ. ստերլինգ:

### ТИФЛИССКІЙ КОММЕРЧЕСКІЙ БАНКЪ

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒԵՏԻՄԵՆԻ ԲԱՆԿԻ

Թիֆլիսի Առևտրական բանկի վարչութիւնը ստանով յայտնում է հասարակութեանը, որ մինչև մի նոր փոփոխութիւն, յունվարի 11-ից 1874 թ. բանկը վերցնում է և վճարում է ատկոսները հետևեալ շափով:

- Վ. Երցնուծ է**
1. Փոխ տուած գուճարները, ատկոսաբեր թղթերի զբաւականով.
  - ա. Պետական Բանկից ընդունվող թղթերի Երբք ամսով. . . . . 6 1/2%
  - Վ. Երց ամսով. . . . . 7%
  - բ. Պետական Բանկի չընդունվող թղթերի Երբք ամսով. . . . . 7 1/2%
  - Վ. Երց ամսով. . . . . 8%
2. Մասնաւոր ընթացող հաշվով. Եւրոպայի ատկոսաբեր թղթերով և մուրհակներով. . . . . 7%

3. Մուրհակների հատմամբ
- Մինչև 6 ամիս. . . . . 8%
- Մինչև 9 ամիս. . . . . 8 1/2%
4. Եւրոպայի զբաւականով.
- Տեղի վրա. . . . . 9%
- Պատասխանում. . . . . 10%
- Վ. Ծարուծ է**
1. Հասարակ ընթացող հաշվով. . . 5%
  2. Գնումներն մինչև պահանջ. . . 5%
  3. " վից ամսով. . . . 5%
  4. " մի սարով. . . . 6%
  5. Եւրոպայի մի տարով կախված է վարչութեան հետ արած պայմանից:
- (ա, մ) 4.

### КОММЕРЧЕСКОЕ СТРАХОВОЕ

ОТЪ ОГНЯ Общество

ԱՊՈՒՂՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Գործակատար

Վ. Ա. ԴՈՒԿԵԼՍԿԻ

Գօլովնիսի պրոպիետար վրա, Գր. Թամանյանի տանը:

Հիմնական գրամազրուխ 500,000 ռ.

Ով որ ապահովում է հինգ տարով, վճարում է վարձ միայն չորս տարվայ համար:

Ամեն օր, որ ապահովում է ընկերութեան մէջ, չորս տարվայ անընդհատ ապահովութեանց յետոյ, ստանում է 5% զեջումն, իսկ եօթ տարից յետոյ՝ 10% զեջումն:

Առհասարակ մշտական ապահովացողներին կը արվին մեծ գիւրութիւններ, թէ պրէ-միա վճարելու, թէ պայմանաւան կրկնացնելու մէջ:

1 (3)

ԱՅԳՈՒ ՃՐԱԳՊՈՒՅԵՐ (բաղի շահատանն) շատ յարմար պարտեղներում և թէ ամառանոցում գործ ամէլու: Գտնվում է արժան գնելով Լ. Ծատուրանցի խանութում պ. Շաբուրովի տանը:

Իմ խմբագրած «ՍՈՒՍԿ ԼՍՊԱՍՍԱՆՆԻ» իրաւատար կրգարանը, որ բաղկացած է մօտ 300 կրկրից, արդէն տպագրվում է: Անտի ցանկ կացողները կարող են բաժանորդագրուիլ մինչև ապագորթիւնից զուրս դուր, վճարելով իւրաքանչիւր օրինակին 1 ռուբլ: Տպագրութիւնից յետոյ վկայք կ'ձգտուի 1 ռ. 50 կոպ. Հասցէս. Վ. Բաքու. Аваку Лазаревичу Григорьеву. Въ Армянскомъ Училищѣ.

САДОВЫЕ ПОДСВѢЧНИКИ весьма удобны для дачи. Продаются по дешевымъ цѣнамъ въ Деню лампъ Е. Натурова въ домѣ г. Шабурова.

2 (3)

Աւագ Գրիգորեանց

### Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՍՏՅՈՒՆ ԿԱՐԳԱԳՐՈՂ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ստանով տեղեկացնում է Թիֆլիս քաղաքին, որ Քաղաքային վարչութեան ներկայութեամբ ներկայ Յունիս ամսի 18 ին պէտք է լինի անդրախօսութիւն (տորգ), օրինական կերպ օրից յետոյ կրկնանդրախօսութեամբ, Հաւաքարում գանդող քաղաքային հօդի բաժնիը, 1890 զեեսաւին, 2040 կվադրանտի ատճէնի բանակութեամբ վարձով տալու համար, մի և նոյն ժամանակ յայտնվով, որ կ'է քրմին ցանկանայ մասնակցել տորգին, թող ներկայանայ վարչութեան խորհրդարանը նշանակված օրը:

Նակով, այն դիտաւորութեամբ, որ կ'է մէկը ցանկանայ մասնակցել անդրախօսութեանը, պէտք է ներկայանայ Վարչութիւնը անդրախօսութեան համար նշանակված օրը:

Յան ձնաժողովը, որ կազմված է Քաղաքային ընդհանուր ժողովի մէջ, առաջիկայ Նոր Քաղաքային Կանօնադրութիւնը մտցնելու դիտաւորութեամբ բնորդական ցուցակները կազմելու համար, խընդրում է քաղաքիս բնակիչներին, որոնց վրա հաշուում են քաղաքային տուրքերի մէջ ապաւելներ, շտապել յիշեալ ապաւելները մտցնելու գալու յունիս ամսի 15 ից ոչ ուշ, որովհետև 16-ին յունիսի 1870 թ. ՔԱՐԳԱՍՏՅՈՒՆ հաստատված Քաղաքային Կանօնադրութեան 17-որդ յօդվածի հիման վրա, այն անձները, որոնց վրա հաշուում են յիշեալ ապաւելները, զըլվում են ձայնի իրաւունքից ընտրութիւնների ժամանակ, որը լինելու են ներկայ թէ Սեպտեմբեր ամսին:

Կախադատ Յանձնաժողովի Վ. Բալի Սուրբուհեանց

2 (3)

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՍՏՅՈՒՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ստանով յայտնում է, որ Քաղաքային Վարչութեան ներկայութեամբ ներկայ Յունիս ամսի 8-ին պէտք է լինի անդրախօսութիւն, օրինական կերպ օրից յետոյ կրկնանդրախօսութեամբ՝ ձիաներից հարկ հաւաքելու գործը կապարով տարու համար, երեք տարի ժամա-

### ՅՈՒՆԻՒՄ 6

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՍՆՆՈՅ (Յունիսի 5-ին)	Բ.	Կ.
Ոսկին (պրուսկալիս)	5	94
Բամբակ կերանու (հին սերմից)	4	30
Սմիլիկայի սերմից	5	85
Բուրգը թուշի	7	50
Թարաքամի	4	50
Շաքարը սիւ (բրոցիու)	8	10
միւս տեսակը	8	10
ղաղրան, արան-զիւ	5	20
մաքրը վճարած	8	15
Շաքարաւաղը Ռուի	6	70
Ղահվա լիւանի լաւը	17	
Մօիօ շատ լաւը	18	
Մարտիկի ցածը	15	
Ալիւրը երևանի	1	40
Ալիւրը Գեանիու հասարակ	1	45
Շորաղեարու	1	50
Գարին		70
Մոմ		80
Փոխան կազիր Պոլի	6	65
Գարնի	4	60
Լոնգոնի կուրը (Օղեսայի վերայ) 1 լրան արժ է.	7	25
Մարտի և Փարիզ 348 ֆր. արժ է.		100

### Տ Ե Ղ Ե Կ Ա Յ Ո Յ Յ

ՓՕՍՏ	ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ-ԹՈՒՂԻ	ԶԵՆՍԳԻՐ
Ռուսաստան և Արտասահման ամեն օր:	Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 8 ժամին 18 րոպէ տաւաօտան:	Քան քաղց կաղնված հեւազրը ամէ:
Երևանի գաւառ, Քուբայիս, Չէրնոսորի վիճակ, Սուխում:	Մինչև Սուրամ (խառն զը-նացքը) երկուդեան 8 ժամ, 17 րոպէ:	Ալիւրանդրապոլ . . . 1
Երևանից Երևան:		Ախալցիա . . . 1
Բագու, Գանձակ, Գաղտանի նահանգ (թիվէ փոստը):		Ատրախան . . . 2
Չորեքշաբթի		Բագու . . . 1
Քուբայիս, Ալեքսանդրապոլ Ախալցիա:		Գանձակ . . . 1
Ուրբաթ		Երևան . . . 1
Երևան, Քուբայիս, Նուխի Զաքաթալ, Ախալցիա:		Շամախի . . . 1
Շաբթի		Կողթօր . . . 1
Բագու, Գանձակ (ձանր փոստը):		Կողթալիս . . . 1
Բաց նամակը ամէ. . . 5		Վաղարշապատ . . . 1
Ռուսաստան նամակը		Շախումալի . . . 1
Գերմանիա, Աւստրիա		Նոր-Նախիջևան . . . 2
Ֆրանսիա . . . . . 13		Նիժնի-Նովոգորօք . . . 2
Անգլիա . . . . . 14		Փոթի . . . . . 1
Շվեյցարիա . . . . . 14		Աւստրիա . . . . . 2 75
Թուրքիա (Կ. Պոլիս) . . . 20		Անգլիա . . . . . 3 75
Թիւրքիա (ցամաք) . . . . . 20		Գերմանիա . . . . . 2 63
Իտալիա . . . . . 16		Թիւրքիա (Եւրոպ) . . . 3 75
Ամերիկա . . . . . 28		" (Փոթիում) . . . 3 50
Պարսկաստան . . . . . 10		ՓՕՍԻ ԿԱՌՔԵՐ
Հնդկաստան . . . . . 70		Թիֆլիսից վարչկալ-կաս ամեն օր՝ ամառը 6 ժամին կէս օրից յետոյ իսկ ձմեռը 4 ժամին:
Եղիպտոս . . . . . 27		Փոթի . . . . . 13 1
		Միջին . . . . . 90
		Մուրամ . . . . . 3 20
		Մուրամ . . . . . 5 22
		Քուբայիս . . . . . 9
		Փոթի . . . . . 13 1

### ԹԻՖԼԻՍ 1874.

Ս. ՊԵՏԵՐՔԱՆԲԵՐԳԻ ԲՈՐՍԱ	ՀԻՒՆԳԱՆՈՅ
(Մայիսի 25-ին)	
Լ. Օնգօնի րուբլ ամէ 34 3/16 պէնս (փոխանակ 40 պէնս):	Երթնիկ հիւանդների համար գանդում է Ս. Նշան եկեղեցու մօտ Եւրոպ Վարաչի տանը և բաց է ամեն օր հիւանդների ընդունելութեան համար առաւօտը 9 ժամից մինչև 1 ժամը:
Փարիզի րուբլ ամէ 349 սանիվ (փոխանակ 400 սանիվ):	ԿՈՎԿԱՍՏԱՆ ՍՈՒՂԻՆՈՒՄ
Առաջին 5% փոխառութեան տուճակ . . . . . 174	Բաց է Երևանից Երևանի և Կիրակի օրերը, առաւօտը 10 ժամից մինչև կէս օրից յետոյ 5 ժամը:
Երկրորդ . . . . . 170 1/4	ՀԱՍՏԱՐԱՎԱԿԱՆ ԳՐԱԳՆԱԲԱՆ
5% բանկի ամսու, 1 շրջանի 97 1/4	Բաց է ամէն օր, բացի կիրակի և առաւօտը 12 ժամից մինչև կէս օրից յետոյ 5 ժամը:
" " " 2 " 97	
" " " 3 " 97	